

ընտանեկան նիւթական վիճակին չի նեւրեր, ընկերութեան մէջ օգտակար սպաս մը մատուցանելու յարմար կացութիւն մը, իսկ աղջկանց համար նմանապէս՝ ընտանիքի և ազգի օգտակար և պատուարեք անդամներ ըլլալու ընդունակութիւնը:

Այս կերպով կրկնակի նպատակի մը ծառայելով՝ շահաւէտ արդիւնք մը ձեռք բերել հնար պիտի ըլլայ, նախ՝ մեր մանկուոյն տալ լաւ իմացուած ազգային և միջազգային միանգամայն գաստիարակութիւն մը, և յետոյ պատրաստել զանոնք կառավարական վարժարանները ընդունուելու:

Եւ սակայն, այս ամենը անարգել և անխափան ձեռք բերելու կարող ըլլալու համար, ի մէջ այլ կարգապահութեանց, անհրաժեշտ է մանաւանդ նկատողութեան առնել բացակայութեանց առաջին առնելու գործը, որ աւելի մանաւանդ ծնողաց հոգածութեան կը պատկանի: Ի դուրս ներքին կանոնադրներ, պատիժներ պիտի գծեն ու սահմանեն, վայրապար վարիչը կամ հսկողը օրը քանի քանի անգամ պիտի կրկնէ աշակերտաց ար վարժարանէ բացակայ չգտնուիլն՝ ի բաց առեալ տկարութեան կամ հիւանդութեան պարագաները, եթէ ծնողը փոյթ չտանի կանոնադրապէս իրենց զաւակերը զպրցոց զրկելու:

(Շարունակելի)

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԾԽԱՐԿԷՆ

ԱՆԿԻԹՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՂԵՊԸ. — Ֆրանսացիք փութացնել են յաղթութիւն կոչելու: Ֆրանսական զինուորականութիւնը անգամ մը ևս պարտուեցաւ Անգլիական արտաքին գործոց նախարարութեան: Ֆրանսա իր յաղթութեան վրայ վստահ էր երբ կ'ըսէր Սուլթանին. «Կը տեսնե՞ս որ Անգլիոյ հետ յարաբերութիւններդ կ'աւելան: Քոյրեր ինչպիսիք աթիւն: Փութա՛ մեզ վճարել Պ. Պ. Թիւպինի, Լօրանտի և Տիւբաքի ընկերութեան պահանջած միւլիոնները և մենք քեզ կը պաշտպանենք Ալպիոնի հետ ունեցած պայքարիդ մէջ»:

Աթիւն ապացոյց մըն է թէ Ֆրանսան լաւ չի ճանաչար Անգլիական զահիճին զիտաւորութիւնները որ եթէ առ այժմ չուզեր պատերազմի մը մէջ նետուիլ, կը փախաքի սակայն որ միւս պետութիւնները կուրի բռնութիւն իրարու հետ վստահ ըլլալով որ միշտ օգուտ մը պիտի կրնայ քաղել անկից:

Ասոր համար, երբ Լօրա լանտտովն տեսաւ որ այս պարագային մէջ Ռուսիա և

Գերմանիա կրնան թեկնածու ըլլալ Տաճկաստանի, չի վարանեցաւ կրնակ զարձնել և անգլիական զօրակի ծաղկել: Այսօր միջազգային կարգապահութեան կը թուի և ունի պայքար հետադուրս: Բայց, Բրիտանական զինուորականութիւնը միևնոյն ժամանակ կը գործեր ելլալու Բեռլին մէջ և կը մղեր Ալպիւն համար զիմազրել Ֆրանսայի որպէսզի այս վերջինը ստիպուի բռնադատուի կան միջոցներու գիմելու, հոգ չէ թէ ասանկով ընդհարում մը յարուցանէր ևս, պակաս պետութիւններուն միջև:

Պատրաստուած թակարկը անարուեստ էր և անկարելի էր Ֆրանսան անոր մէջ ձգել:

ԱՍԻԱԿԱՆ ԴԵՊԵՐ. — «Տէյլ Թէկէ-կրաֆ» Բէթլեհայի իր թղթակցէն կ'իմանայ թէ ուսական կառավարութիւնը վերջովի լուրեր ստացեր է Կեդրոնական Ասիոյ գործերուն իսկական վիճակին վրայօք: Եթէ այդ լուրերը ստույգ են շատ չանցած սահմանադրի անհամաձայնութիւններ կըրնան ծագիլ, որոնք արեւմտահայ ընդհարումներու կրնան տեղի տալ Հնդկաստանի սահմանադրութեան վրայ:

Պօքրայի սահմանադրի երկայնքը Ռուսիոյ հաստատած պահանջներուն դիմադրական պետերը միաբերան կը յայտարարեն թէ քանի մը օրէ ի վեր աֆղանները անսովոր գործունէութիւն մը ցոյց կուտան սահմանադրի նահանգներուն մէջ և թէ Աֆղանիստանի ներքերը ցրուած զօրագունները արագօրէն զէպի Գապուլ կը զրկուին: Ռուսիոյ զաղտնի գործակալները կըցած են ստուգել որ Աֆղանական հողին վրայ զանազան սահմանադրի պահանջները զաղտնարար օգնութիւն ստացած են, թէ զենքի և ուսեստի պաշարնի վերանորոգուած է և թէ նոր թնդանութիւններ զրկուած են այդ ամբողջութիւններէն շատերուն մէջ:

Հիւսիսային սահմանադրի զէպի Գապուլ և Աֆղանիստանի ներքերը տանող ճամբուն վրայ օտարազգի երկաշափներ որոնք հաւանօրէն անգլիացիներ են, կը հսկեն բերդակներու հիմնարկութեան վրայ որոնք աճապարանօք կը կառուցուին ազամագիտական կարեւրագոյն կէտերուն վրայ:

Այս ազամական պատրաստութիւնները կը խուլին բարձրաստիճան աս ուս պաշտօնատարները որոնք Չարին օրինակին հետեւելով՝ խաղաղասիրական քաղաքականութեան մը պաշտպաններն են: Բայց ուրաշալի չէ որ Աֆղանիստանի այս պատերազմական ցոյցները Ռուսիոյ ուղղուած են, որովհետեւ նոր էմիրը ունէ զգուշութիւն ձեռք չառաւ Պարսկական կամ Հնդկական սահմանադրի վրայ:

Երբեմն նոյն իսկ ծիծաղալար գտած էր պարուհիին իրեն զէմ հանած նախանձորը, նուազ կարեւորութիւն տալով այս բանին քան իր գերուհիներուն ամենայնպէս անմենափոքր անհատարմութիւնը, վստահ խիստ անաշտ էր իր պալատին վերաբերեալ բաներուն մասին, և խտրի կը պատմէր ամենադժոյժ պարտադանդութիւնն իսկ որ գործուէր իրամական սովորութեանց զէմ, որոնք կը պահանջէին որ կիները արտաքուստ անտեսանելի ըլլան և անստղծու:

Բայց հիմայ, խաղի մէջ ըրած կորուստի ազդեցութեան տակ, իր հոմանիւն ընթացքը տարօրինակ կերպով պատժապարտ կը թուէր իրեն... քանի որ ստակ կուտար իւր, իրաւունք ունէր որ իրեն ուղածն ընէին և հնազանդէին:

Իր թիւաբարոյութիւնը կատարեալ էր, ու կը սպասէր որ Սալաւտին բան մը զըտ-

Հաւանական է որ Հապիպ Ուլլահ Էմիրը զահակալութեան ի վեր անխօս զերակատարի մը խաղին համակերպելով, այժմէն սկսած է Անգլիոյ համաձայն շարժիլ: Կը մնայ զիտեալ թէ Ռուսիոյ աչքը պիտի վախճայ Էմիրին ցոյցերէն:

ԱՆԿԻԹՐՈՒԹՅԱՆ ԲԻՐՈՒՄՆԵՐԸ. — Գերմանական ստիկանութիւնը արեւը քրտնի մէջ է: Ինչպիսիք հասած տեղեկութիւններ կ'իմացնեն զաղտնող քաղաքի իտալացի վտանգաւոր անիշխանականներու որոնք Ալպերի ճամբով Չուիցերայէն Գերմանիա կ'ուղեւորին:

Այս պահու, Միւնիխ քաղաքը խոնքած է օտարազգի գործադրներով — մեծ մասամբ արմազիկ և ներկիչ — որոնք զեռչին մեկնած զէպի իրենց երկիրը ինչպէս ամեն տարի ձմեռամուտին: Առնց վրայ ազդեցիկ հսկողութիւն մը կատարել գրեթէ անկարելի է:

Ոչ-պաշտօնական մամուլը ինքնին՝ կը պահանջէ որ կառավարութիւնը Պալիերան վերջնականապէս ազատէ այս օտարազգի գործադրներէն: Վարչիւրալիս թերթը հեգնօրէն կըրէ որ Մարտիլ զրկուին:

— Նիւ Եօքքէն «Տէյլ Մէյլ»-ի հասած հետազոյի մը համաձայն, Միս Սթընը ազատելու համար եղած հանգանակութեան գումարը հասած է 50,000 տոլարի, որ երկ հեռագրական երեք ուղարկումով զրկուեցաւ Կ. Պոլսոյ Միացեալ Նահանգներու հիւպատոսին: Կը յուսուցուի որ փրկանքին գինը ամբողջացնելու համար պէտք եղած մնացեալ 40,000 տոլարի գումարը պիտի հանգանակուի շարաթը զեռ չի բոլորած:

Պ. Ռուզվելտ անձամբ կը վարէ Միս Սթընը ազատելու համար եղած պաշտօնական բանակցութիւնները, որոնց վրայ բացարձակ լուծիւն կը պահուի:

— Կ. Պոլսէն կը հեռագրուի «Կազէթ տը Ֆրանքֆորթ»-ի:

Պ. Պարսի կողմէ Թէկէի փաշայի ներկայացուած ծանօթագրին մէջ՝ որով կը պնդէ Ֆրանսայի պահանջներուն ամբողջական վճարման վրայ, հետեւեալ պայմանները զրուած են:

Ֆրանսական կառավարութիւնը յապաղեցուցիչ վարմունքներու առաջին առնելու

համար, կը պահանջէ որ յիշեալ գումարը անմիջապէս իրեն յանձնուի: Այդ գործողութիւնը կատարել ետքը Ֆրանսական կառավարութիւնը որոշեալ պայմանաժամ մը պիտի սայ Բ. Դրան որպէսզի որոշէ Լօրանտի ժառանգորդներուն 1897-ի Հոկտեմբերէն ի վեր եղած կանխավճարներուն գումարը:

Երբ այս քննութիւնը կատարուի, Ֆրանսական կառավարութիւնը իրեն յանձնուած գումարէն պիտի առնէ այդ կանխավճարներուն գումարը և զայն պիտի վերադարձնէ կայսերական գանձին. և ապա Պ. Լօրանտի ժառանգորդներուն անձամբ պիտի վճարէ հոյնը:

Քովկէի ինչիւրը լուծուած ըլլալ կը թուի: Անգլիա կը հաւանի Սուլթանին գերիշխանութիւնը ճանշալ ինչպէս նաեւ իրաւունք կուտայ անոր մինչև Պաղատա շինուած երկաթուղին մինչև Գուաիթ երկարել, պայմանաւ որ Թուրքիան իր զօրագործները առաջ վարել եռ կենայ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Վիճակի Առաջնորդ Գեր. Յովսէփ Եպ. Այվազեան երկ վերջնականապէս Գահիրէ վերադարձաւ:

— Քաղաքական ժողովը, անգամաւոր մեծամասնութեան բացակայութեան պատճառով, իր ուրբաթի սովորական նիստը չէ կըցած գումարել երկէ:

Հետեւեալ յառաջիկայ երեքշաբթի ժողովը տեղի պիտի ունենայ նախագահութեամբ Ս. Առաջնորդ Հօր:

ԿԱՐԵԻՈՐ Ա.Զ.Գ.

Հանրօգուտ Շինութեանց Նախարարութեան Ռեզերուատներու ճիւղը երկու ջրաբաշխական հիմնութիւն ունեցող երկրաշափներու պէտք ունի Ասուանի և Վատի-Հալֆայի համար: Լեցուն ամսականներ: Դիմել թերթին Տնօրէնութեան:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Գահիրէ մէջ յանձնախումբ մը կազմուելու վրայ է Ն. Բ. Խոթիլին մայրաքաղաք վերադարձը տօնելու համար: Յորեկեայ և գիշերեայ հանդես մը պիտի տրուի Օթէրայի հրապարակին վրայ:

Երեկոյն տեղացի հարուստներու տունները զրօշակներով և լոյսերով պիտի զարդարուին:

ճածը քիչ մը կարմրեցաւ, ալանդակ ողնուկը կարծես ալ աւելի գրեթէ արտ եղաւ և երկչոտութեամբ հարցուց:

— Ինչ պատմեմ փաշայի... Մեր ամենուս վարպետը եղող Անգարին մէկ ուրիշ պատմութիւնը կ'ուզէ... Մեծ խալիֆային իշխանութեան օրով պատահած նշանաւոր զէպերէն մէկը կ'ուզէ... Կամ երկ Եռապա պտտելու գացած առննիս պատահած արկածը...

— Այդպիսի բաներով չեմ զբոսնուր:

— Եթէ անոր կ'ուզէ որ երկու օրէ ի վեր ամեն մէկ ժամու հարէմին մէջ ինչ որ եղաւ՝ այն պատմութիւն:

— Ինձի ինչ... զիս կնկան տեղ ես զրեւ... քու բաժնասանքներէ ինչ համ կ'առնեմ... ուրիշ բան մը գտիր, պապա... ապա թէ ոչ, տեղդ ուրիշ կը բերեմ...

— Տեղդ ուրիշ կը բերէ... Ահ, փա-

Գ. Ե. Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԻԿԻԹԷ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԻՆ ԶԱՐԹԻԹԷԻ ԾԵՆԻՐԸ

—Լը Ըար սը Բօր Սայիս վերա-
պահութեամբ կարճատև գործ
Բօր Սայիսի մէջ շրջագայող լուր մը ըստ
որում ծանր դէպքեր տեղի ունեցած են Պէյ-
րութի մէջ։ Կսուի թէ զինեալ անձեր յար-
ձակեր են Ֆրանսական հիւպատոսարանին
վրայ։

—Լէ Բիւրաւիսէն կը քաղենք հետեւալ
հաստատման անիմաստի մասին։

Քանի մը օր առաջ մեր պաշտօնակից-
ներէն մին մասնաւոր ըրաւ մայրաքաղա-
քին մէջ անիմաստի (սիւլլաբի) դէպքերուն
խոսիլը աճումը։

Գահիրէի առողջապահական բնիչ Տըս-
Տըկէր որուն հետ տեսակցեցանք, հեռա-
կալ յայտարարութիւնը ըրաւ մեզի։

«Իրաւ է որ այս պահուս Գահիրէի մէջ
անիմաստի դէպքերը քիչ մը աւելի շատ-
ցած են բազմամամբ նախորդ շաբաթնե-
րուն և նոյն իսկ ամիսներուն, բայց այդ
դէպքերը որոնք շատ բազմաթիւ չեն, ամէն
աւարի որոշեալ ժամանակամիջոցի մը կը
պատահին նամանակաւոր Գահիրէի նման
բազմամարդ քաղաքի մը մէջ։ Նոյն բանը
տեղի կ'ունենայ օտար բոլոր մեծ քաղաք-
ներուն մէջալ։

«Ասիկ ի գաւտ անիմաստի այս դէպքերը
այն աստիճանի բազմաթիւ չեն որ կարենան
մեծնորոգել թիւին վրայ ներգործել, ու
բովհետեւ այս տարուան մեծնորոգելուն թիւ-
ւը նուազ է անցեալ երկու տարիներուն
մեծնաւահամարէն։

«Պիտի առարկէր թէ այս կացութեան
պատճառն է բնակիչներուն նուազումը։ Ա-
նորեայ վիճակագրութիւններէն կը տեսնենք
թէ ճիշտ հակառակն է որ տեղի կ'ունենայ
և թէ զրեթ միշտ ծնողներու թիւը բարձ-
րագոյն է մեծնորոգելու թիւէն։

«Գալով այդ հիւանդութիւնը անհետացնե-
լու համար ձեռք առնուած միջոցներուն,
այս մասին առողջապահական տեսչութիւնը
բան մը չի խնայէր։ Կապանելէ այն տու-
ները ուր անիմաստի դէպքեր տեղի կու-
նենան և հիւանդութեան շէնքով կը պատ-
ուաստէ անիմաստին չի բռնուած տղաք-
ները։ Աղքատներու տունները և տղաքները
կը պատուաստուին և կ'ապանելուին ձրիա-
բար։ Դեղագործները միշտ կրնան բողո-
ջապահական պաշտօնատան զիմը պէտք
եղած պատուաստը ունենալու համար։

«Այսքանը կը բաւէ այն դէպքերուն մա-
սին որոնք կը ծանուցուին թաղին առող-
ջապահական բժշկիչներուն, որովհետեւ կան
մէկ քանի ոչ շատ խղճամտ բժիշկներ։ — ասի

բացառութիւն մըն է— որոնք ընտանիք մը
աշուղդի մէջ չի ձգելու համար վարչու-
թեան չեն խնայներ թէ անիմաստի դէպք
մը պատահած է հոն։ Առողջապահական
վարչութիւնը իրաւունքը վերապահած է այս-
պիսիները գաւտի ենթարկելու ամեն անգամ
որ իրեն ազդարարուի անոնց այս պար-
տականութեան մէջ թերացումը։

«Միւս հիւանդութիւնները, ինչպէս ժան-
տաւենդ, ժանտաւենդային ջերմ և այլն,
վախճուելու չափ տարածուած չեն։

«Գալով օգտաւոր, շարունակեց Տըս-
Տըկէր, սաստիկ հազուադէպ է և առողջա-
պահական հսկիչի պաշտօնին մէջ ուր կը
գտնուիմ մէկ ու կէս տարիէ ի վեր, չի
հանդիպեցայ օգտաւորի դէպքի մը որ Գահի-
րէի մէջ պատահած ըլլայ։ Ստուգած մէկ
քանի դէպքերս զրաւն բերուած էին»։

—Կ. Պոլսէն՝ Առողջապահական միջազ-
գային խորհուրդին գաւտուած մէկ հեռագ-
րէն կ'իմացուի թէ տասնը հինգ օրէ ի վեր
օրեւ ժամանակաւոր դէպք չէ պատահած ի
Սամանի։ Հետեւեալ քաղաքներուն վերց-
ցուած է։

—Ն. Բ. Խոտիլը իր վերջին ընդունե-
լութիւնը պիտի կատարէ Նոյեմբերի 4ին
երկուշաբթի օրը։

Ն. Բարձրութիւնը չորեքշաբթի օր, Նո-
յեմբեր 6, առտուան ժամը 7 ու կէսին
Աղքատներու ճամբայ պիտի ելլէ մաս-
նաւոր կառավարման և ժամը 10ը 45 ան-
ցած պիտի հասնի Գահիրէ։

—Յառաջիկայ երկուշաբթի, 24 Հոկ-
տեմբեր, տեղի պիտի ունենայ բացումը
«Բնակեցիկ մանուկներու պատասպարան»ին
որ կառուցուեցաւ հանրային հանգանակու-
թեամբ ի յիշատակ Լէտի Բրամբլի։

Այդ շէնքը կառուցուած է ի Բասթի-
Անի, Նեղուի եզրերը։

Շինութեան համար ծախսուած է 2500
ոսկի։

Երեք յարկէ կը բաղկանայ այդ պատ-
արանը որուն գեանապարկին մէջ կը գտ-
նուի ընդունելութեան սրահը, բազմաթիւ
և սանտուղներուն սենեակը։

Առաջին և երկրորդ յարկին վրայ կը
գտնուին ճաշարանը, սպասարաններուն սե-
նեակները, զրօսանքի սրահը, խոհանոցը և
զրասենեակները։

—Պ. Լուցաթիւն, ընդհ. անօրէն Պանք
օֆ Էնթրօթի, եկող շաբթու Ատուան կուղե-
ւորի այդ քաղաքին մէջ նոյն դրամատան
մասնաճիւղը հաստատուելու համար։

չէթման որ այս առտու սիրտս նեղացուց,
այ ձանձրացայ իրմէ... շիտակը եթէ կ'ու-
զես, հոգս ալ չեմ ընել որ ըրած բանե-
րը... ամենքն ալ մէկ տեսակ ապրանք
են, սա կ'եններ։

—Հոգս իբրեւ լիւր, փաշա... տեսա՞ր մի
հլու գերին... արարած մը որ ձեր անձին
նորիւրուած է... Ան միայն ձեզի հոգ պատ-
ժանելու բաներ չ'ըներ։

—Ինչ կը պաշտպանես կոր զինքը...
ես անոր մտքին գանգատ մը ըրի... Ձե-
զէ որ իբրեւ լիւր ալ միտնեցուն պէս է,
մա՞րդս, իրեն վրայ ալ վտանգութիւն չու-
նիմ։

Այս յայտարարութեան վրայ՝ Սալա-
տին շուարեցաւ մնաց. Ինչ, նախամեծար-
ուած գերին, իբրեւ լիւր ալ տիրաբար չէ՞ր
թագաւորել ուրեմն ու չէր իշխել տիրոջը
վրայ իր աչքերուն հօգը զօրութեամբ...

—Պ. Ճիօրտանօ, անօրէն Գահիրէի
Փօսթին, Սուէի ճիւղին անօրէն կարգուած
ըլլալով, իրեն պիտի յաջորդէ Պ. Մուսա
որ մինչև այժմ ընդիշի պաշտօն կը վարէր
ի Մանսուրա։

—Գահիրէի Ջրի բնակարաններու Գունար
14 մինչև Սեպտեմբեր 30ի հասոյթը եղած
է 90,039 եգիպ. ոսկի, մինչևեւ անցեալ
տարի 84, 928։

Միևնոյն ժամանակամիջոցին համար ծախ-
սերը եղած են 23,499 եգիպ. ոսկի, իսկ
անցեալ տարի 22,627։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

ԼՈՒՏՈՆ, 16 Հոկտ. — Տիւնտիւն կը հե-
ռագրեն Թալմուի թէ Պօթի գլխաւոր զօ-
րախումբը կը գտնուի միշտ Բոնկոլապոլի
քով. անտարակոյս բազմաթիւ պօզնիներ երկ-
րին հիւսիսարևելքը և արևմտարևելքը փա-
խած են։

Բարեկուտ գլխին մէջ վաճառականու-
թեան վերականգնող կարծիքը երթալով ա-
ւելի կը տարածուի առևտրական շրջանակ-
ներուն մէջ. խեղ մը կարեւոր ընկերութիւն-
ներ կը պատրաստուին առևտրական մեծ
շարժումին որ պիտի յաջորդէ պատերազմին։
Վալֆարտ հրացանի բռնուեցաւ։

(ՌԻԻԹԵՐ)

ԲԱՐԻՉ, 16 Հոկտ. — Ելեմտական յանձ-
նաժողովը որոշեց խորհրդարանի մէջ պաշտ-
պանել կորստական հաշուեցոյցին ջնջումը։

Կ. ՊՈԼԻՍ, 16 Հոկտ. — Բազմաթիւ հայ
պանթօնաւ ընտանիքներ որոնք արտօնու-
թիւն ստացած էին Սերպիայէն վերադառ-
նալու Տաճկաստան հասնելուն բանտար-
կուեցան։

(ՀԱՎԱՍ)

ԼՈՒՏՈՆ, 16 Հոկտ. — Ծանր կոիւ մը
ծագեցաւ Ալաբերտի մէջ Տիւրքիաներու
և Վուլֆեյսթիւններու միջև։ Կռուարարները
սովին և հրազենի դիմեցին. Տիւրքիանե-
րու զինուորացիները թալուեցան. երկու
կողմէն հինգ վիրաւորեալ կայ։

(ՌԻԻԹԵՐ)

ԲԵԹԵՐՍՊՈԼԻԿ, 17 Հոկտ. — Ռուսա-
կան մամուլը յայտարարելով հանդերձ թէ
Ռուսիա շատօնց ի վեր մէկդի դրած է
Հնդկաստանի վրայ արշաւելու գաղափարը,
բայց սակայն ժամը եկած կը համարի
Աֆղանիստանը Ռուսացնել իրականապէս։

ԳԵՐԹՈՒՆ, 17 Հոկտ. — Ապստամբ

խումբեր իրենց գլուխ ունենալով Պօթ հրա-
մանատարներ, զէպի հարաւ կը յառաջա-
նան և իրենց ճախին վրայ մէկ կողմէ
ամեն բան աւարի կ'առնեն և միւս կողմէ
նոր զինակից կը գտնեն։

Թշնամին մինչև Հոֆֆելտ և Սալտան-
հա Պէյ հասած է, բայց հոն գտնող
անգլիական սլէքը վտարաբար պիտի կա-
րենան զէմ գնել։

ՀՌՈՄ, 17 Հոկտ. — Կառավարութիւն
ձերբակալեց նշանաւոր աւազակապետ Մու-
զովինօն որ մէկ տարիէ աւելի է սարսա-
փահար ըրած էր Գալապոլիս։

(ՌԻԻԹԵՐ)

Կ. ՊՈԼԻՍ, 17 Հոկտ. — Բացարձա-
կապէս յայտնի կերեայ թէ Ռուսիա բան
մը ընելու միտք չունի Բ. Դրան ի նը-
պաստ Ֆրանսական պահանջներուն հանդէպ։

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ԱՐՄԻՆՈՒԴԹ

Աղեքսանդրիա, 17 Հոկտ.	
Բրիտիշ Էմբէ	99 1/2
Իւնիֆիէ	107 3/4
Տալիւս Սանիէ	102 /—
Տօմանեալ	104 1/2
Թրքական Գոնսօլիտի, սեռի C	25 60.
Բուսէլի Երկաթուղի	Ֆր. 103 1/2
Բանալ տը Սիւէզ	» 3681 /—
Բանալ տը Սիւէզ օպիւիկ	» 645 /—
Նաշ. պանք օֆ Էնթրօթ Ա. Ռ.	11 3/16
Աղեքս. Թրամվէյ (բրիւ.)	Ֆր. 49 1/2
Աղեքսանդրիոյ Թրամվէյ	
(աքսիօն տիվիտանտ)	» 27 /—
Բրէտի ֆոնսիէ եգ. աքսիօն	» 553 /—
Բրէտի ֆոնսիէ 3 0/0	» 264 1/2
Ջրի Ընկ. Գահիրէ	» 630 /—
» Աղեքսանդրիա Ա. Ռ.	35 3/4
» Թանթա	» 12 /—
Պէնէրայի անանուս ընկ.	» 48 /—
Ինթրաքի մարքէթի օպիւ. 5 0/0	» 100 /—
» » աքսիօն	» 0. 15. 4
» սօլի ընտ սօտա	» 0. 15. 9
Նուսկոլիէ Օթէլ	» 4. 1/16

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻԲ

ՔՕՆԴՐԱ

Աղեքսանդրիա, 17 Հոկտ.	
Բամպակ. Նոյ. Թալիւ. 10	11/16 /—
» Թանթա. » 10	5/16 /—
» Մարտ » 10	13/32 /—
Պիզրէ. Նոյ. Դեկ. Թան.	
» Դրուշ 62	25/40 /—
» Գիւտ. մարտ » 63	5/10 /—
Բակլա. սեպ. հոկտ. » 91	/— /—
» Նոյ. դեկ. յվ. » 92	3/4 /—

—Փաշա ինչպէս կը գտնէ նոր վար-
ժուհին, ամենայն միամտութեամբ ինք-
զինքը մասնեց ու երկու բառով։

—Ա՛ շատ աղւոր, շատ գեղեցիկ։

—Տեսա՞ր մի, մտածեց խեղկատակը.
արդէն կը սիրէ կոր գանի։

Ա՛, ո՛րչափ աղէկ կը ծանշար այս
խորամանկը իր տէրը. աղջկանը վրայ
խօսելու ատեն Մուրաթի միայն ձայնէն
հասկցած էր այն բանը զոր բրնձը չէր
գիտէր։

Աղբարեւ ըսածը իրաւ էր. բրնձը հրա-
շագեց գտած էր գանի իր անմեղութեան
վեհութեամբը, վարժունքին խրատութեամբ-
բը, կուսածաղիկէ աչքերուն վճիռութեամբը,
որոնք առջի օրուանէ ի վեր Մուրաթի աչ-
քէն անդին չէին երթար։

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵԹԻԱՆ

Յ. ԲԵՄՊԵՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ — ԳԱՀԻՐԷ, ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԿԻՆ ԶԱՊԹԻՅԷԻ ՇԷՆԳԻՆ ԴԷՄ

